Հավելված N 19
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթիևսպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2020թ. հուլիսի 23-ի N 386-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հանրակրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն) հանրակրթական և արդտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի (այսուհետ՝ Բաժնի) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիրը՝ 18-34.3-Մ2-21):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3,Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման նպատակով միջազգային կառույցների հետ համագործակցության ապահովման գործընթացը.
2. իրականացնում է միջազգային կազմակերպությունների և նախարարության միջև կնքվող հանրակրթության և արտադպրոցական կրթության բնագավառում համագործակցության հուշագրերի և ծրագրերի կազմման աշխատանքները.
3. իրականացնում է զարգացման և ռազմավարական ծրագրերից բխող հանրակրթական և արտադպրոցական կրթության ոլորտի միջոցառումների իրականացման գործընթացը.
4. իրականացնում է կրթության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի միջոցառումների համալիր ծրագրի մշակման և համակարգման աշխատանքները.
5. իրականացնում է հանրակրթական հաստատություններում բնապահպանական, <<Առողջ ապրելակերպ>>, թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերի համակարգման, ընտանեկան բռնության, թմրամոլության, թմրամիջոցների և այլ կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում համագործակցության ապահովումը.
6. իրականացնում է հատուկ և ներառական կրթության ծրագրերի մշակման, իրականացման, կազմակերպման համակարգման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների կրթության իրավունքի իրացման ապահովման աշխատանքները:

Իրավունքները՝

- նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
- համագործակցել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կրթության վարչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ՝ հատուկ և ներառական կրթության, ինչպես նաև ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների կրթության կազմակերպման հետ կապված խնդիրների վերհանման և վերլուծությանև ծրագրերի մշակման նպատակով.
- իրականացնել հատուկ և ներառական, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների կրթությանն առնչվող միջոցառումների ու մրցույթների նախապատրաստման,

անցկացման գործընթաց, տեղերում կատարելով ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ.

- մասնակցել միջազգային կառույցների հետ համագործակցության արդյունքում կազմակերպվող քննարկումներին.
- պահանջել և ստանալ կրթության կազմակերպման վերաբերյալ օրենսդրական և նորմատիվ այլ իրավական ակտեր, ուսումնական հաստատության բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Պարտականությունները՝

- իրականացնել անհրաժեշտ ուսումնամեթոդական օգնություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների կրթության կազմակերպման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Նախարարության կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտերի շրջանակում.
- նախապատրաստել և կազմակերպել հատուկ և ներառական կրթության, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների կրթության կազմակերպմանն ուղղված միջոցառումներ.
- մասնակցել հատուկ և ներառական կրթության, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների կրթության հարցերին վերաբերող միջոցառումներին.
- ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, կարծիքներ հատուկ և ներառական կրթության, ինչպես նաև ազգային փոքրամասնություններին վերաբերող՝ գերատեսչություններից և կազմակերպություններից ստացված ծրագրերի նախագծերի վերաբերյալ.
- իրականացնել ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ընդունում, վերլուծում, ամփոփում, պետբյուջեի կատարումն ապահովող ՀՀ կառավարության հանձնարարականների կատարման համակարգում.
- ուսումնասիրել հանրակրթության և արտադպրոցական կրթության ոլորտում միջազգային փորձը և ներկայացնել առաջարկություններ.
- ներկայացնել հանրակրթության և արտադպրոցական ոլորտի բյուջետային և ՄԺԾԾ հայտերի՝ բաժնի գործառույթներից բխող առաջարկություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Բողոքների բավարարում
2. Ժամանակի կառավարում
3. Բանակցությունների վարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում
5. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահախորդակցություն:

4.Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատաքի կամակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման շրջանակներում և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4. Շփումներ և ներկայացուցչություն

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: